ELAudit

www.elaudit.am

Armenia Yerevan, Abovyan street. 22a 48ap. Tel.+37498123397, Email: info@elaudit.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Նիկոլա Ինթերնեյշնլ, Արմենիա» ՍՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նիկոլա Ինթերնեյշնլ, Արմենիա» ՍՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու

իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռքբերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհարժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Չճևափոխված կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների

2014թ. Հունիսի 16

Կարուժան Մուրադյան

Տնօրեն -աուդիտոր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. Դրամ

	Ծա-նոթ.	2013թ.	2012թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	2	69,056	85,933
Հետաձգված հարկային ակտիվներ		578	4392
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**69,634**	**90,325**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	3	542,793	570,728
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4	971,309	1,391,070
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	5	5,331	23,024
Այլ ընթացիկ ակտիվներ		11,144	10,323
Ընթացիկ ակտիվներ շահութահարկի գծով		-	3,107
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**1,530,577**	**1,998,252**
Ընդամենը ակտիվներ		**1,600,211**	**2,088,577**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 25/02/2014թ

Տնօրեն — Գլխ. հաշվապահ

Է. Խառատյան — Ս. Բաբայան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(շարունակություն)

Հազ. Դրամ

	Ծա-նոթ.	2013թ.	2012թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Բաժնետիրական կապիտալ	6	50	50
Կուտակված շահույթ		118,368	108,288
Վերագնահատման պահուստ		26,537	26,537
Ընդամենը սեփական կապիտալ		**144,955**	**134,875**
Ոչ Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	7	1,226,884	1,405,845
Այլ ոչ ընթացիկ պարտավորություն			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1,226,884**	**1,405,845**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	7	79,428	308,523
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	143,891	239,334
Ընթացիկ պարտավորություն շահութահարկի գծով		2,164	-
Պահուստներ և այլ պարտավորություններ		2,889	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**228,372**	**547,857**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**1,600,211**	**2,088,577**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 25/02/2014թ

Տնօրեն Գլխ. հաշվապահ

Է. Խաչատյան Ս. Բաբայան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. Դրամ	Ծանոթ.	2013թ.	2012թ.
Հասույթ	9	1,571,389	1,337,130
Վաճառքի ինքնարժեք	10	(1,193,356)	(1,047,735)
Համախառն շահույթ		**378,033**	**289,395**
Այլ եկամուտներ		35,022	3,763
Իրացման ծախսեր	11	(69,608)	(70,292)
Վարչական ծախսեր	12	(67,885)	(50,780)
Այլ ծախսեր	13	(33,977)	(20,741)
Գործառնական գործունեությունից շահույթ		**241,585**	**151,345**
Ֆինանսական ծախսեր		(126,546)	(115,951)
Շահույթ մինչև հարկերը		**115,039**	**35,394**
Շահութահարկի գծով ծախս	14	(19,845)	(10,220)
Տարվա շահույթ		**95,194**	**25,174**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդամենը համապարփակ արդյունք		**95,194**	**25,174**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 25/02/2014թ

Տնօրեն Գլխ. հաշվապահ

Է. Խաչատյան Ս. Բաբայան

ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը: